Ընդունված է Թալինի ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի 2023թ.սեպտեմբերի 1-ի

Արձանագրություն թիվ-1

Հաստատում եմ՝
Թալինի ավագ դպրոցի տնօրեն՝
-----------------------/Ա.Կնյազյան/

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի ավագ դպրոցի

Գրադարանավարի

2023-2024 ուսումնական տարվա

Թալին 2023

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 |
| Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | օգոստոս-սեպտեմբեր | ուս. գծով տնօրենի տեղակալ, գրադարանավար | |
| կազմել և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը: | օգոստոս-սեպտեմբեր | տնօրեն, կրթակ.աջակցութ. գծով տնօրենի տեղակալ,գրադարանավար | |
| Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Վերանորոգել գրադարանային ֆոնդում եղած դասագրքերն ու գրքերը: | ուս. տարվա ընթացքում, մշտապես | տնօրեն, գրադարանավար | |
| Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: | ուս. տարվա ընթացքում | գրադարանավար | |
| Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկա-վարել դպրոցի ընթերցանությունը: | ուս. տարվա ընթացքում | գրադարանավար | |
| Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | սեպտեմբեր | տնօրեն, գրադարանավար | |
| համաձայն հաստատության կանոնադրության՝ ապահովել սովորողների և մանկավարժական աշխատողների գրադարանային հավաքածուից և տեղեկատվական միջոցներից անվճար օգտվելու իրավունքը, տրամադրում ուսումնական նյութի յուրացման համար համապատասխան տեղեկատվություն՝ անկախ նյութական կրիչի ձևից (գիրք, պարբերական և շարունակվող հրատարակություններ, թերթ, ամսագիր, տեսալսողական նյութեր). | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| աջակցել սովորողների և մանկավարժական աշխատողների ինքնակրթության արդյունավետ կազմակերպմանը, մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացմանը՝ ուսումնական ծրագրերին համապատասխանող, տարբեր կրիչների վրա պարունակվող (գրքային ֆոնդ, թվային և մագնիսական կրիչներ) տեղեկատվության տրամադրման միջոցով | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| համապատասխան պայմաններ ստեղծել սովորողների համագործակցային, ստեղծագործական, հետազոտական և այլ հմտությունների զարգացման համար՝ ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| ձևավորել հաստատության գրադարանային-մատենագիտական հավաքածուն, կազմակերպել հավաքածուի համալրումը, | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կանոնակարգումը, պահպանումը և օգտվողներին տրամադրումը, վարել հավաքածուի այբբենական, թեմատիկ, էլեկտրոնային քարտարանը (առկայության դեպքում), ըստ կարիքների, ստեղծել տվյալների բազա | | | |
| 1 | համալրել դասագրքերի, գիտական, գիտահանրամատչելի, մեթոդական, գեղարվեստական գրքերի, տեղեկատուների, ճյուղային գրականության ամբողջական հավաքածու թղթային և էլեկտրոնային կրիչներով. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 2 | կազմակերպել ֆոնդի տեղաբաշխումը, պահպանումը, տեղեկատվության տրամադրումը բաժանորդներին, վարում գրադարանային ֆոնդի տեղեկատու-մատենագիտական, այբբենական ցանկեր, թեմատիկ և էլեկտրոնային քարտադարան. բաժանորդական քարտերի հաշվառում, հաստատության կարիքներից բխող տվյալների բազա. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 3 | իրականացնել պարբերաբար համալրվող տեղեկատվության վերլուծական մշակում, տարբերակում, բաժանորդների խորհրդատվություն և անհատական սպասարկում, տրամադրում ընթացիկ տեղեկատվություն մանկավարժական աշխատողներին կրթական գործընթացների կառավարման բարելավման համար. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 4 | համագործակցել այլ գրադարանների և մշակութային հիմնարկների, տեղեկատվական կենտրոնների հետ գրադարանային հավաքածուի համալրման և արդյունավետ փորձի ներմուծման նպատակով. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 5 | աջակցել սովորողներին ընթերցասրահում դասերին պատրաստվելուն՝ օգտագործելով գրադարանային հավաքածուում առկա տեղեկատվությունը, այդ թվում՝ էլեկտրոնային (համացանցի) ռեսուրսները. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 6 | օժանդակել շնորհանդեսների, գրական քննարկումների, կինոդիտումների, ներկայացումների, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը. | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |
| 7 | աջակցել այցելուների ընթերցողական պահանջների բավարարմանը, ապահովel ընթերցողներին գրադարանի ձեռք | ուս. տարվա ընթացքում, մշտապես | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | բերած նոր նմուշների վերաբերյալ տեղեկատվությամբ | | | |
| 18 | Վերանորոգել աշակերտական դասագրքերը: | հունիս օգոստոս | դասղեկներ, գրադարանավար | |
| 19 | Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը: | հունիս | գրադարանավար | |
| 20 | Օգտագործման ենթակա դասագրքերը վարձույթով տալ ծնողներին, այդ նպատակի համար մշակել գիրքը վարձույթով ծնողին տալու համապատասխան պայմանագիր: | օգոստոս սեպտեմբեր | գրադարանավար | |